ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԵՇԻՇՅԱՆԻՆ՝ «Մ. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԻՍՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԷՇԻՇԵԱՆ ՈՐ Ի ՄԻՏՆԻ, ԱՒՍՏՐԱԼԻԱ

Աւստրալիայի հայոց թեմի առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիօզեանից գոհունակութեամբ փեղեկացանք Ձեր արդիւնաշատ ծառայութեան մասին, որ մատուցում էք մեր Սուրբ Եկեղեցուն եւ բարեպաշտ ժողովրդին՝ որպէս երկարամեայ ատենապետ թեմական խորհրդի:

Ամենայն Հայոց նուիրական օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթութիւններն ենք յղում Ձեզ, սիրելի պրն Քէշիշեան, որ Աւստրալիայի հեռաւոր մայրցամաքում Աստուածպարգեւ Ձեր կեանքը հայրենասէր ու եկեղեցասէր ծառայութեամբ ընծայում էք ի շինութիւն եւ ի պայծառութիւն մեր Մայր Եկեղեցու, ի բարօրութիւն հաւատացեալ մեր ժողովրդի:

Հայրապետական այսու Կոնդակով, սիրով ընդառաջելով բարեջան առաջնորդի ազնիւ խնդրանքին, Ձեր կեանքի ութսուներորդ՝ յոբելեանական փարեդարձի առիթով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Մ. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Վստահ ենք, որ Դուք Աւստրալիայի հայաբոյր գաղութում վաստակեալ խորին յարգանքով ու հեղինակութեամբ պիտի շարունակէք Ձեր ջանքերը ներդնել եւ յամենայնի օգնական ու աջակից լինել Տիրախնամ թեմի հոգեւոր դասին՝ ի գլուխ թեմա-

կալ առաջնորդ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզեանի, վասն համայնքի հոգեւոր կեանքի նորոգութեան:

Հայոց Հայրապետիս աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Ս. Ներսէս Շնորհալու բարեխօսութեամբ Ամենախնամն Աստուած Իր հանապազ օրհնութեան ու ողորմութեան ներքոյ պարգեւի Ձեզ քաջառողջ ու երջանիկ կեանքի երկար օրեր, գործոց յարանորոգ յաջողութիւններ:

«Փութասջիք, զի բարեացն գործովք հաստատուն զձեր կոչումն եւ զընտրութիւն պահիցէք»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Յունիսի
ի թուին Տեառն 2000
եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 12